

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«20» հունվարի 2020 թ. թիվ 140 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան



Կ Ա Ր Գ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
(ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ) ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) ԳԿՄԿ (այսուհետ՝ Կենտրոն) մագիստրատուրայում ներմուծում է մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման գործընթացները:
2. Կրթական ծրագրերի մշտադիտարկումը և պարբերական վերանայումը ենթադրում է շարունակական և պարբերաբար ուսումնասիրություն, ինքնավերլուծություն և ինքնագնահատում, որի հիմնական նպատակն է կրթական ծրագրերի որակի բարձրացումը և արդյունավետության ապահովումը:
3. Կարգը սահմանում է Կենտրոնի կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացների նպատակները և խնդիրները, այդ գործընթացներին ներկայացվող հիմնական պահանջները, կիրառվող ընթացակարգերը և համապատասխան ժամանակացույցերը:
4. Կարգում տրվում է նաև ծրագրի ընթացիկ մոնիթորինգի հաշվետվության ձևաթերթը ծրագրի կատարողականի առանցքային ցուցանիշների ցանկով, ծրագրի պարբերական վերանայման համար պահանջվող փաստաթղթային փաթեթի կազմը և այլն:
5. Կենտրոնի մագիստրոսի պատրաստման բոլոր կրթական ծրագրերը պետք է ենթարկվեն տարեկան մոնիթորինգի և պարբերական վերանայման՝ սկսած 2014/15 ուսումնական տարիներից:
6. Ծրագրերի ընթացիկ մոնիթորինգն իրականացնում են ԳԿՄԿ ուսումնական ստորաբաժանումները տարեկան պարբերականությամբ, իսկ վերանայման պարբերականությունը որոշվում է ելնելով անհրաժեշտությունից և մասնագիտական արդիականությունից:
7. Մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացն ընդհանուր առմամբ ներառում են՝ կրթական ծրագրերի, ձեռք բերված ուսումնական վերջնարդյունքների, կիրառված դասավանդման և ուսուցման մեթոդաբանության և արդյունավետության, կրթական ծրագրերի ուժեղ և թույլ կողմերի, գնահատման համակարգի, անհրաժեշտ միջոցների առկայության պատշաճ ուսումնասիրությունը և գնահատումը: Մշտադիտարկման գործընթացը ներառում է նաև համապատասխան միջոցառումների մշակման ծրագիր՝ կրթական ծրագրի

հետագա բարելավման և զարգացման համար:

8. Կրթական ծրագրերի մոնիթորինգը կրթական ծրագրի պարբերաբար ուսումնասիրությունն է համապատասխան տվյալների և հետադարձ կապի միջոցով ձեռք բերված տեղեկատվության միջոցով:

Կրթական ծրագրի վերանայումը կրթական ծրագրի բոլոր բաղկացուցիչ մասերի պարբերական խորը ուսումնասիրությունն է:

II. ԳԿՄԿ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Մոնիթորինգի նպատակը

9. Կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգը Կենտրոնի որակի ապահովման գործընթաց է, որի նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը ծրագրի սահմանված նպատակներին և կրթական չափորոշիչների պահանջներին: Մոնիթորինգի վերջնարդյունքները ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների (նաև պլանի) կազմակերպումն ու իրականացումն է:

Մոնիթորինգի խնդիրները

10. Մոնիթորինգի խնդիրներն են՝

10.1. գնահատել կրթական ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների կրթական վերջնարդյունքները, դրանց ձեռքբերման ընթացքը և մակարդակը.

10.2. գնահատել դասավանդման և ուսումնառության գործընթացների արդյունավետությունը, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների արդիականությունը, բացահայտել ծրագրի ռեսուրսային կարիքները.

10.3. բացահայտել ծրագրի ուժեղ և թույլ կողմերը,

10.4. մշակել կրթական ծրագրերի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների և գործողությունների նոր պլան և ապահովել վերջիններիս կատարումը:

11. Մոնիթորինգի և պարբերական վերանայման նպատակների իրականացման

շրջափուլերն են.

- 11.1. Ինքնագնահատման գործընթացների նախագծում, ժամանակացույցի սահմանում և ինքնագնահատում.
- 11.2. Ինքնագնահատման արդյունքների հիման վրա գործողությունների ծրագրի մշակում.
- 11.3. Ինքնագնահատման արդյունքների և գործողությունների ծրագրի քննարկում Կենտրոնի ղեկավար և համակարգելու լիազորություններ ունեցող մարմինների հետ.
- 11.4. Գործողությունների ծրագրի մշակում.
- 11.5. Ծրագրի իրագործման արդյունքների ուսումնասիրություն.
- 11.6. Հետագա բարելավում.
- 11.7. Արտաքին գնահատում:

Մոնիթորինգի կազմակերպման գործընթացը

12. Կենտրոնի կրթական ծրագրերի մոնիթորինգի գործընթացը սկսվում է ԳԿՄԿ տնօրենի հրամանով՝ դեկանի կողմից ներկայացված մոնիթորինգի ենթակա կրթական ծրագրերի ցանկի և մոնիթորինգի անցկացման ժամանակացույցի հիման վրա:

13. Կրթական ծրագրի մոնիթորինգը իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում տվյալ մասնագիտական ամբիոնի վարիչի կողմից տարեկան պարբերականությամբ:

14. Ամբիոնի վարիչը յուրաքանչյուր ուսումնական տարվա համար մշակում է մշտադիտարկման ժամանակացույցը:

15. Մշտադիտարկումը իրականացվում է դասախոսների, ուսանողների և դասախոսների հետ խորհրդակցությունների և ուսանողներից և դասախոսներից հարցաթերթիկների միջոցով ստացված տեղեկատվության ուսումնասիրության միջոցով:

16. Մոնիթորինգի խմբեր

16.1. Մոնիթորինգի գործընթացի իրականացման նպատակով ԳԿՄԿ տնօրենի կողմից ամբիոնի վարիչի առաջարկությամբ յուրաքանչյուր կրթական ծրագրի

կամ ծրագրերի խմբի համար ձևավորվում են մոնիթորինգի խմբերը (ՄԹԽ): ՄԹԽ-ը կազմավորվում է ԳԿՄԿ ստորաբաժանումների ղեկավարներից, մասնագիտական ամբիոնների վարիչներից (մինչև 3 հոգի) կամ ամբիոնների վարիչների ներկայացմամբ առնվազն երկու դասախոսներից, ինչպես նաև ՈԻԽ-ի ներկայացուցիչներից (1 կամ 2 ուսանող): Մոնիթորինգի գործընթացը սկսվում է ծրագրի նախորդ ուստարվա կատարողականի ցուցանիշների հավաքմամբ և վերլուծությամբ:

- 16.2. ՄԹԽ-ն առաջնորդվում են կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի սույն ընթացակարգով և հաստատված ժամանակացույցով:
- 16.3. Մոնիթորինգի արդյունքների հիման վրա ՄԹԽ-ը կազմում է տարեկան հաշվետվությունը՝, ըստ սահմանված հաշվետվության ձևաթերթի (տե՛ս *հավելված 1*), և հաջորդ ուստարում կրթական ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների (փոփոխությունների) պլանի նախագիծը:
- 16.4. Մոնիթորինգի հաշվետվությունը սահմանված ձևաթերթի միջոցով պարունակում է ծրագրի նախորդ ուստարվա կատարողականի ցուցանիշները, որոնք ընդգրկում են նաև ծրագրին մասնակից ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքները:

17. Հաշվետվությունը տրամադրվում է Կենտրոնի ղեկանին, ուսումնական մասի պետին, փոխտնօրենին և որակի ապահովման բաժնի ղեկավարին՝ քննարկելու և առաջարկություններով հանդես գալու նպատակով:

18. Մոնիթորինգի խմբի կողմից ներկայացված հաշվետվության հիման վրա ղեկանի կողմից պատրաստվում է **ամփոփիչ հաշվետվություն**, որը ներառում է ամբիոնի առաջարկությունները և դիտողությունները, առկա խնդիրների լուծման ժամանակացույցը, որը ներկայացվում է Կենտրոնի տնօրենի հաստատմանը:

19. Կենտրոնի տնօրենի կողմից նշված եզրափակիչ հաշվետվությունը հաստատվելուց հետո այն քննարկվում է տվյալ ամբիոնի հաջորդ նիստին՝ հերթական ուսումնական տարվա ավարտին:

III. ԳԿՄԿ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

20. ԳԿՄԿ կրթական ծրագրերի պարբերական վերանայման ընթացակարգն ամբողջությամբ համապատասխանում է «ԳԿՄԿ կրթական ծրագրերի հաստատման կարգում» նկարագրված ԳԿՄԿ կրթական ծրագրերի ներքին փորձաքննության և վերջնական հաստատման ընթացակարգերին:

21. Վերանայման գործընթացը պլանավորվում և իրականացվում է Կենտրոնի համապատասխան մասնագիտական ամբիոնի հետ համատեղ:

22. Ծրագրի ամբողջական գնահատումը և պարբերական վերանայումը ԳԿՄԿ ուսումնական և կրթական գործընթաց է, որտեղ կարող են ներգրավվել են նաև արտաքին փորձագետներ:

23. Ծրագրի վերանայման պարբերականությունը որոշվում է ծրագրի իրականացման շրջափուլի նորմատիվային տևողությամբ, արտոնագրի գործողության ժամկետով, ծրագրի մասնագիտական ոլորտի զարգացման տեմպերով և այլն:

ԳԿՄԿ մագիստրոսական կրթական ծրագրերի վերանայման պարբերականությունը սահմանվում է 2-5 տարի ժամանակահատվածով:

24. Կրթական ծրագրի պարբերական վերանայման նպատակն է գնահատել ծրագրի շարունակական նպատակահարմարությունը, հիմնավորվածությունը և արդիականությունը (ծրագրի նպատակների համարժեքությունը), ինչպես նաև մատուցման փաստացի որակը՝ ծրագրի իրականացման լրիվ շրջափուլի արդյունքներով, որոշում ընդունել ծրագրի հետագա շարունակման նպատակահարմարության կամ փոփոխությունների վերաբերյալ:

25. **Վերանայման հիմնական խնդիրներն են.**

1) վերագնահատել ծրագրի արդիականությունը և պահանջված լինելը աշխատաշուկայում, հաշվի առնելով համապատասխան մասնագիտական ոլորտում գիտելիքների կիրառման առկա պրակտիկական, տեխնոլոգիական առաջընթացը և դասավանդման ու ուսումնառության մեթոդների զարգացումը.

2) ուսումնասիրել ծրագրում ներգրավված ուսանողների և շրջանավարտների կարծիքները ծրագրի որակի վերաբերյալ, ինչպես նաև հիմնական գործատուների բավարարվածությունը ծրագրի շրջանավարտներից.

3) համապատասխանեցնել արտաքին ծրագրային պահանջների փոփոխություններին (օրինակ՝ կրթական չափորոշիչներ, միջազգային

առարկայական կողմնորոշիչներ, համապատասխան մասնագիտական, օրենսդիր և ոլորտը կարգավորող կառույցների պահանջներ) և դրանց հետ համադրել ծրագրի փաստացի կրթական վերջնարդյունքները.

4) գնահատել ժամանակի ընթացքում ծրագրի կառուցվածքում և իրականացման մեթոդներում կատարված փոփոխությունների ազդեցությունը.

5) հաշվի առնել հավատարմագրող կամ արտաքին գնահատում իրականացնող կառույցների եզրակացությունները.

6) կատարել ծրագրի քննադատական վերլուծություն՝ դիտարկելով դրա ուժեղ ու թույլ կողմերը իրականացման ընթացքում, և նախաձեռնել վերլուծությունից բխող ծրագրային փոփոխություններ.

7) հիմնավորել ծրագրի շարունակման, դադարման կամ վերանայման նպատակահարմարությունը:

26. Վերանայման համար կրթական ծրագրերի ընտրությունը կատարվում է համապատասխան ամբիոնի վարիչների, դասախոսների և ՈԱ բաժնի ղեկավարի, դեկանի և ուսումնական մասի պետի, փոխտնօրենի խորհրդակցության արդյունքում:

27. Կրթական ծրագրերի վերանայումն իրականացնում է վերանայման հանձնաժողովը:

28. Վերանայման գործընթացի մեկնարկից մեկ ամիս առաջ ՈԱ բաժնի ղեկավարը ուղարկում է ծանուցում՝ կրթական ծրագրերի վերանայման գործընթացը սկսելու վերաբերյալ:

29. Վերանայման գործընթացի մեկնարկից առաջ ՈԱ բաժնի ղեկավարը կազմակերպում է խորհրդատվություն վերանայման հանձնաժողովի անդամների հետ՝ կրթական ծրագրերի վերանայման ընթացակարգերի, գործընթացների, անհրաժեշտ փաստագրման վերաբերյալ:

30. Խորհրդակցության արդյունքում մշակվում է վերանայման ժամանակացույցը և նշանակվում պատասխանատուներ:

31. Կրթական ծրագրի վերանայումն իրականացնելու համար նախապատրաստվում են նախորդ տարիներին իրականացված տարեկան հաշվետվությունները և կրթական ծրագրի վերանայմանն առնչվող այլ

փաստաթղթերը, որոնք ներկայացվում են վերանայման հանձնաժողովի ուսումնասիրությանը:

32. Վերանայման հանձնաժողովը, հիմք ընդունելով վերոնշյալ հաշվետվությունը, կազմակերպում է քննարկումներ ուսանողների, վերջին տարիների ընթացքում ավարտած շրջանավարտների, դասախոսների և կրթական գործընթացի կազմակերպման մասնակիցների հետ: Ըստ անհրաժեշտության կարող են հրավիրվել նաև գործատուներ և վերանայվող մասնագիտական ոլորտի արտաքին փորձագետներ:

33. Ուսումնասիրությունների արդյունքում վերանայման հանձնաժողովը պատրաստում է հաշվետվություն արդյունքների վերաբերյալ, կրթական ծրագրերի առաջարկվող փոփոխությունների նախագիծ և իրագործման միջոցառումների պլան:

34. Առաջարկվող փոփոխությունները և միջոցառումները դասակարգվում են որպես

Էական, որոնք վերաբերում են կրթական ծրագրի կասեցման կամ հետագա կենսունակության վերաբերյալ կասկածներին.

Նպատակահարմար, որը կարիք ունի հատուկ ուշադրության՝ որակի և կրթական գործընթացի կազմակերպման չափանիշները ապահովելու համար:

Ցանկալի՝ ընդհանուր առմամբ թերություններ առկա չեն, սակայն ցանկալի է միջոցառումներ իրականացնել կրթական գործընթացի կազմակերպման որակը բարձրացնելու համար.

Ողջունելի՝ կրթական ծրագրի կազմակերպման գործընթացում թերություններ չեն հայտնաբերվել և որպես լավագույն փորձ՝ երաշխավորվում է կիրառման այլ ամբիոններում:

35. Վերանայման հանձնաժողովի նախագահը փոխանցում է վերոնշյալ փաստաթղթերը Գիտական խորհրդին կից ՈԱ հանձնաժողովին՝ որոշում կայացնելու նպատակով:

36. Գիտական խորհրդին կից ՈԱ հանձնաժողովի կողմից որոշումը կայացնելուց հետո վերանայման հանձնաժողովի նախագահը կազմակերպում է ամփոփող

խորհրդակցություն հետագա քայլերը քննարկելու և միջոցառումների ծրագիրը իրականացնելու համար:

37. Վերանայման հանձնաժողովի հաջորդ հանդիպումը կայանալու է մեկ տարի հետո՝ կատարված գործողությունների վերաբերյալ քննարկում կազմակերպելու նպատակով:

38. Վերանայման հանձնաժողովի կազմը.

38.1 Վերանայման հանձնաժողովը բաղկացած է վերանայվող մասնագիտության կրթական ծրագրի ամբիոնների վարիչներից, ամբիոնների պատասխանատուներից, առնվազն երկու առաջատար դասախոսից, Ուես ներկայացուցիչներից և ՈԱ բաժնի ղեկավարից: Վերանայման հանձնաժողովի նախագահին նշանակում է Կենտրոնի տնօրենը:

38.2 Վերանայման հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության, ոլորտային ուսումնասիրության համար կարող է կազմել նպատակային հանձնաժողովներ և հրավիրել արտաքին փորձագետներ և գործատուներ:

38.3 Վերանայման հանձնաժողովի նախագահը պատասխանատու է հանձնաժողովի անդամների ներկայության և աշխատանքների իրականացման համար:

Վերանայման հանձնաժողովի կազմը հաստատվում է ԳԿՄԿ տնօրենի կողմից:

Հավելված 1.

ԳԿՄԿ մագիստրոսական կրթական ծրագրերի տարեկան մոնիթորինգի (մշտադիտարկման) հաշվետվության ձևաթերթ

Կենտրոնի ամբողջական անվանումը՝ ՀՀ ԳԱԱ Գիտարկթական միջազգային կենտրոն:

Մասնագիտությունը /բաժինը.....

Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը.....

Ուսուցման ձևը (առկա, հեռակա).....

Շնորհվող որակավորումը.....

Ծրագրի սկզբնական հաստատման ամսաթիվը.....

Ծրագրի նախորդ մոնիթորինգի ամսաթիվը.....

Ծրագրի նախորդ վերանայման ամսաթիվը.....

Ձևաթերթը լրացնում է ծրագրի մոնիթորինգի խումբը, որը հետագայում հաստատվում է ԳԿՄԿ գիտական խորհրդում:

Հավելված 2.

1. Նախորդ մոնիթորինգի արդյունքներով ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականը

Հաշվետվության ենթակա են պլանով նախատեսված բոլոր միջոցառումները

Թիվ	Միջոցառում (գործողություն)	Կատարողականը	Պատասխանատու անձը	Ծանոթություն
1.				
2.				
3.				
4.				
5.				

2. Ծրագրի քանակական բնութագիրը

Ուսումնական տարի	2018/19	2019/20	2020/21
Ընդունելությունը և ուսանողական համակարգը			
Դիմորդների թիվը այդ (թվում 1-ին հայտով)			
Ընդունելության մրցութային ցուցանիշը և անցողիկ շեմը (ՄՈԳ-ը)			
Ընդունված ուսանողների թվաքանակը և ընդունելության միջին միավորը			
Ուսումնական առաջադիմության ցուցանիշները			
Ծրագրում ընդգրկված ուսանողների ուսման առաջադիմությունը (0%)			
«Գերազանց», «լավ» և «բավարար» գնահատականների բաշխումն ըստ ուսանողների թվի (0%-ով)			

Ծրագրում ընդգրկված ուսանողների հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ)			
Դուրս մնացած և վերականգնված ուսանողների թիվը			
Այլ ծրագրեր/այլ ծրագրերից տեղափոխված ուսանողների թիվը			
Տվյալներ ծրագրի շրջանավարտների վերաբերյալ			
Ամփոփիչ ատեստավորման արդյունքները			
Հաջորդ կրթական մակարդակում ուսումը շարունակող ուսանողների մասնաբաժինը			
Մասնագիտությամբ կամ հարակից ոլորտում աշխատանքի անցած շրջանավարտների մասնաբաժինը			

3. Ուսանողական հարցումների արդյունքները

Ներկայացվում են ծրագրի դասընթացների վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքները՝ մատուցման որակի, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների և դրանց արդյունավետության վերաբերյալ:

4. Շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները

Շրջանավարտների բավարարվածության հարցումների հիման վրա ներկայացվում են ծրագրի նախորդ երկու տարիների բավարարվածության հարցումների տվյալները, որոնք վերաբերում են կրթական ծրագրին և համապատասխանությանը արդի ժամանակաշրջանի և աշխատաշուկայի պահանջներին, դասավանդման մեթոդաբանությանը, ուսուցման արդյունավետությանը, գիտելիքների գնահատմանը, ուսումնական գործընթացի կազմակերմանը:

5. Ծրագրի դասախոսական կազմը

Ներկայացվում են ՊԴ կազմի առաջարկությունները ծրագրի իրականացման և կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի վերաբերյալ և գնահատվում կրթական ծրագրերում կատարված փոփոխություններն ու միջոցառումների արդյունավետությունը:

6. Ծրագրերը

Գնահատվում և ներկայացվում են նախորդ երկու տարիների ընթացքում կրթական ծրագրերում կատարված փոփոխությունները:

7. Նախորդ մոնիթորինգի, վերանայման և արտաքին գնահատման արդյունքները

Ներկայացվում են վերջին անգամ ծրագրի մոնիթորինգի, վերանայման/ հաստատման և/կամ արտաքին գնահատման արդյունքները՝ նշելով այդ գործընթացների արդյունքում ծրագրի բարելավման ուղղությամբ արված պահանջների և առաջարկությունների իրականացման ուղղությամբ ինչպիսի միջոցներ են ձեռնարկվել:

8. Ծրագրի ուժեղ և թույլ կողմերը /SWOT վերլուծություն/

Վերլուծվում են կրթական ծրագրերի ընդունելության, ուսանողական կարիքների բացահայտման, ուսանողական կազմի, ուսանողների առաջադիմության և ծրագրի շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ հարցերը, այնուհետև իրականացվում են եզրակացություններ և առաջարկություններ կապված ծրագրի պահանջարկի հետ, ուսումնական գործընթացի աջակցման միջոցների համարժեքության վերաբերյալ, որոնց հիման վրա պետք է իրականացվեն բարելավումներ հետագա գործողությունների պլանավորման ուղղությամբ:

SWOT վերլուծության միջոցով վեր են հանվում ծրագրի ուժեղ և թույլ կողմեր, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Կրթական ծրագրի SWOT արդյուսակը

SWOT գործոնը	Փաստացի վկայություն	Լավագույն փորձի զարգացման և տարածման, հնարավորությունների օգտագործման առաջարկություններ	Թույլ կողմերի շտկման և վտանգների չեզոքացման կամ մեղմացման առաջարկություններ
Ուժեղ կողմերը 1. 2. 3. 4.			
Թույլ կողմերը 1. 2. 3. 4.			
Հնարավորությունները 1. 2. 3. 4.			
Վտանգները 1. 2. 3. 4.			

9. Որակի բարելավման գործողությունների պլանը

Բարելավման պլանը կազմվում է ԳԿՄԿ ուսումնական ստորաբաժանման (մասնագիտական ամբիոնի, ուսումնական մասի) և ԳԿՄԿ վարչական անձնակազմի մակարդակով իրականացվող միջոցառումների պլանը հաջորդող երկու ուսումնական տարիների համար:

Բարելավման ոլորտը/առարկան	Պլանավորված միջոցառումների գործողությունը	Պատասխանատուն	Կատարման ժամկետը
1.			
2.			
3.			
4.			
5.			

Մասնագիտական ամբիոնի վարիչ

.....

Կրթական ծրագրերի տարեկան մոնիթորինգի փուլերը

I ԳԿՄԿ տնօրենի հրամանն ընդունված ռեսուրսամեթոդական մասի (ՈԻՄՄ) կրթական ծրագրերի տարեկան մոնիթորինգի անցկացման վերաբերյալ:

II ՈԻՄՄ-ում ռեսուրսամեթոդական մասի պետը ստեղծում է կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի խմբեր (ՄԹԽ)

III ՄԹԽ-ները կազմում են ծրագրերի մոնիթորինգի հաշվետվությունները (ՄՀ), որոնք ներառում են ծրագրի նախորդ տարվա կատարողականի գնահատականը և բարելավման միջոցառումների պլանը:

IV ԳԿՄԿ գիտական խորհուրդը (ԳԽ) քննարկում է ՄՀ-ները և համապատասխան եզրակացություն տալիս ՈԻՄՄ պետին:

V ՈԻՄՄ պետը կազմում է մագիստրոսական ծրագրերի տարեկան մոնիթորինգի ամփոփ հաշվետվությունը և ներկայացնում ԳԿՄԿ ԳԽ քննարկմանը:

VI ԳԿՄԿ ԳԽ-ը կայացնում է որոշում մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ:

Ընդհանուր եզրակացություն կրթական ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ

1. _____

2. _____

3. _____

4. _____

5. _____

Մոնիթորինգի արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել

ԳԿՄԿ գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի նիստում
(որոշման թիվ, ամսաթիվ)

Որակի ապահովման հանձնաժողովի նախագահ՝ _____

Մոնիթորինգի արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել ԳԿՄԿ
գիտական խորհրդի կողմից (որոշման թիվ, ամսաթիվ) _____

ԳԿՄԿ տնօրեն, (ԳԿՄԿ դեկան) _____

Մոնիթորինգի հաշվետվությունը ստուգվել է ԳԿՄԿ ՈԱԿ-ի կողմից:

ՈԱԿ բաժնի պետ՝ _____

Մոնիթորինգի արդյունքները քննարկվել են ԳԿՄԿ գիտական խորհրդի նիստում
(որոշում թիվ....., ամսաթիվ):

Տնօրեն՝

Հավելված 3. ԳԿՄԿ կրթական ծրագրի տարեկան մոնիթորինգի (մշտադիտարկման) ընթացակարգի սխեման

